



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ.ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ
հեռ. /0236/6-06-90

N 01-30

«15» «04» 2011թ»

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ՝
Պ.Ն. Է. ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ.

ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքում ապրիլի 12 – ին տեղի է ունեցել հանրային լսումներ, որին մասնակցել են համայնքի ղեկավարը աշխատակազմի աշխատակիցները և ավագանու անդամները, համայնքի բնակիչները, մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության բաժնի պետ՝ Ա. Լալայանը:

Լսումների ժամանակ համայնքի ղեկավար Ռ.Ալավերդյանը ներկայացրել է 2011թ-ի առաջին եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ: Նա տեղեկացրեց, որ առաջին եռամսյակի համար բյուջեն եկամուտների գծով նախատեսված է եղել կատարել 8243,0 հազ. դրամով, սակայն կատարվել է 6067,8 հազ. դրամով:

Համայնքում աղբահանման աշխատանքները կատարվել են ժամանակին: Համայնքի ղեկավար Ռ.Ալավերդյանը ներկայացրեց նաև 2011թ.-ի երկրորդ եռամսյակում կատարվելիք աշխատանքների մասին: Երկրորդ եռամսյակում նախատեսված է կատարել գյուղի նախադպրոցական հիմնարկի կապիտալ շինարարական աշխատանքների շարունակությունը ինչպես նաև համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին, զոհված ազատամարտիկների և պատերազմի մասնակիցների ընտանիքներին պարբերաբար կտրվի դրամական օգնություն:

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ.ԱԼԱՎԵՐԴՅԱՆ